



ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 177

12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԵՍ ԵՍ
ԵՍ ԵՍ
ՏՈՐԻՈՆ
ԿԵԿԵՐ



ՏՕՆԱՑՈՅՑ

Դեկտեմբեր 13 † Կիր. զմ.

14 Բշ. զմ.

15 Գշ. զկ.

16 Դշ. առ.

17 Եշ. աղ.

18 Ուր. թմ.

19 Շր. թկ.

Ե. Յիսնակաց:

Ս. Թեոպոմպայ Եպիսկոպոսին եւ Թեալնայ վկային եւ չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւսիփի եւ Բասիլիդեայ:

Ս. Աղդէի հայրապետին եւ Աբգարու բազաւորին:

Պահոց:

Ս. Ինդոսի ներքինւոյն եւ Դոմնոյի կուսին եւ Գղերիկոսի քահանային եւ Երկուց բիւրուցն որ այրեցան յեկեղեցւոջ Նիկովիդացւոց: Եւ Բարեկենդան Ծննդեան Քրիստոսի:

Պահոց: Ա. or պահոց Ծննդեան:

Ս. Լեւոնի Հռոմայ հայրապետին եւ Քաղկեդոնի Ս. Ժողովոյն ՈՂԶ հայրապետացն: Եւ Բ. or պահոց Ծննդեան:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Զորրորդ տարի Թ 12 Դեկտեմբեր 1914 Թիւ 177

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առձագանց շաքապերքը շա-
ռենակէ Հայաստանի կաթողիկէ Ժ Զ դրօշդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Սյս մաղբանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն արժագին կ'օրհնէ յիշեալ Շաքապերքը, յիշյալս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարգ. Մերի թէ՛ Վափի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեան Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բուանմարտ:

Ս. ԲԱՆԱՅԱՅԱՊԵՏԻՆ Ա. ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ
ԿՈՆԴԱԿԸ

Պատուական եղբարց Պատրիարքաց,
Նախագահից, Արքեպիսկոպոսաց, Եպիս-
կոպոսաց եւ այլ Վիճակաւորաց, որ իա-
ղապօրէիս եւ հաղորդակցութիւն ունին
Առաքելական Աթոռոյն հետ:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՊ ԺԵ.

Պատուական եղբարք, ողջոյն եւ Ա-
ռաքելական Օրհնութիւն:

Ամենեւրանեալ Առաքելապետին Գա-
հը, Նախախնամող Աստուծոյ զաղանի

խորհրդով, առանց մեր արժանաւորու-
թեան բարձրանալունս պէս, որովհետեւ
Գրիստոս Տէրն կը կանչէր զՄեզ առ
Պետրոս ուղղած խօսքովը թէ՛ առաժեռա՛
զոյխարս իմ, առաժեռա՛ զգառիւնս իմ
(Յովհ. ԻԱ. 15—17), անմիջապէս զթա-
ռատ սիրով դարձուցինք աչքերնիս այն
հօտին, որ մեր հոգածութեան կը յանձ-
նուէր, հօտ մը՝ որ իրօք անթիւ է ըստ
որում կը բովանդակէ ամէն մարդիկ՝
այլեւայլ եղանակաւ: Վասն զի Յի-
սուս Գրիստոս ազատեց զամէնքն ալ,
որքան որ են, թափելով իւր արիւնն ի
փրկանս. և չկայ մէկ մը, որ այս փր-
կագործութեան բարիքներէն դուրս
ձգուի բացառաբար. ասոր համար ապ-

տուածային Հովին մարդկային ազգի մէկ մասը արդէն իր Եկեղեցւոյ փարա- խին մէջ յաջողաբար հաւաքած է, մէկ մասն ալ կ'ըսէ թէ սիրոյ իր կերպով պիտի մղէ հոն. նաեւ այլ եւս ոչխարք եւն իմ, որ ոչ եւն յայտ գարթէ. եւ զայնս եւս պարս է ինձ ածելոյ այս, եւ ճայնի իմում յախցեմ (Յովհ. Ժ. 16): Եւ իրօք չենք ուզեր ծածկել ձեզ, Պատուական Եղբարք, թէ անշուշտ աստուածային բարութեամբ զգացինք մեր հոգւոյն մէջ ամէն բանէ առաջ ամբողջ մարդոց փրկութիւնը հոգալու բուռն եռանդ. մը և սէր. և Քահանայապետութիւնը ստանձ- նած պահուն՝ Մեր իղձն այն եղաւ, զոր Յիսուս ունեցաւ խաչն ընդ-գրկելու մօտ. Հայր սուրբ, պահեա՛ զնորս յսնուն իո, որով ետուն ինձ (Յովհ. Ժէ. 11):

Եւ արդ, հազիւ առաջին առիթը տրուեցաւ Առաքելական պատուաստի- ճանի այս գղեակէն գրեթէ մէկ ալ- նարկով դիտելու մարդկային իրաց ըն- թացքը, արդարեւ դառն ցաւօք համա- կեցանք քանի որ քաղաքական ընկերու- թեան կացութիւնը արտասուելի կը ներ- կայանար մեր աչաց: Վասն զի ինչպէս կարելի էր որ Մեր, հասարակաց Հօր, սիրտը չզգացուէր բուռն եղանակաւ Եւ- րոպոյ և հետեւաբար տիեզերքի ներ- կայ տեսարանին առջեւ, որմէ ո՛չ կա- տաղագոյնը, ո՛չ դառնագոյնը չի յիշ- ուիր երբեք թէ եղած ըլլայ, որուն հա- մար Քրիստոս նախագուշակած է. Լնե- րոց է՛ պատերազմունս եւ հաւքաւս պա- տերազմաց... Յարիցէ ազգ յազգի վերայ եւ թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ (Մատթ. ԻԴ. 6. 7): Ամէն կողմ բռնած է պատերազմի ամենազօրեւոր գ'ւերը. և չկայ կարծես անկից զատ բան

մը որ մարդկային միտքը զբաղեցնէ այսօր: Մեծ են և գերազանցօրէն ճոխ ազգերը որ կը պատերազմին. անոր հա- մար զարմանալու չէ եթէ լաւ սպառա- զինուած զինուորական արուեստի ամե- նավերջին նորագիւտ հնարքներով, տե- սակ մը սերտուած վայրագութեամբ ընդհարին: Ուստի չափ չկայ. ո՛չ աւե- րակաց, ո՛չ ջարդի. օր ըստ օրէ երկիրը նոր արեամբ յորդառաւտ կ'ողողուի և կարելիք ու ոգեսպառ մարմիններով կը ծածկուի: Այսպէս իրարու դէմ վարա- զացած տեսներով մարդիկ, ըսելով է տակաւին մէկ սերնդէ ծագած, միեւ- նոյն բնութեան, միեւնոյն մարդկային ընկերութեան հաղորդակից: Եղբայր հա- մարերով է զանոնք, որոնց հայրը մէկ է յերկինս: Եւ երկու կողմանէ անհամար բանականերով մոլեգնաբար կռուած ա- տեն, քաղաքներ, ընտանիքներ, ամէն անհատ կը սառապին ցաւօք և այն ա- մէն ինեղծութիւններով, որոնք պատե- րազմներու տխուր հետեւանքն ըլլալով կ'ընկերանան անոնց. օր ըստ օրէ այրի- ներու և որբերու թիւն կ'աւելնայ. ճամ- բաներն գոցուելով վաճառականութիւնը կը հիւծի, արտերն ամալի կը մնան. կը լռեն արհեստներն, հարուստները տագ- նապի, աղքատները թշուառութեան, ա- մէնքը սգոյ կը մատնուին:

Այս ժայռայեղ պատահարներէ յու- զուած, ժայռագոյն Քահանայապետու- թեան սեմերն հազիւ կոխած, Մեղի պարտք համարեցինք, Մեր նախորդին, գերահուշակ և ամենասուրբ յիշատակաց աշտանի Քահանայապետին, խօսքերը վերյուշել և զանոնք կրկնելով Մեր Ա- ռաքելական պաշտօնին ձեռք զարնել և թախանձագին պաղատեցանք անոնց

որ կ'առաջնորդեն կամ կը վարեն հասարակայ շահերը, որ նկատի առնելով արդէն թափուած այնքան արտասուքն ու արիւնը, կանխէին ժողովրդոց վերագարձնել խաղաղութեան բարերար արդիւնքներն: Եւ իցիւ թէ, շնորհիւ ողորմածին Ասատուծոյ, այն աւետիսը զոր երգեցին հրեշտակները մարդկան՝ առաւածային Փրկչին ծննդեան առթիւ, նոյնը Անոր փոխանորդութեան պաշտօնօննու սկզբնաւորութեան միջոցին փութով հնչէր. յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն (Ղուկ. Ա. 14): Ունկնդրեն Մեղ, կը ինդրենք, անոնք որոնց ձեռքն է ժողովրդոց բախտը: Վասն զի կան ուրիշ ճամբաներ, ուրիշ միջոցներ որոնցմով կարելի է փնասուած իրաւունքները դարմանել: Ուստի մէկդի դնելով զէնքերնին, բարեմտօրէն և յօժարակամ այդ միջոցներն անգամ մը թող գործածեն: Մենք կ'ըսենք այս, ոչ մեր շահը փնտռելով, այլ իրենց և ընդհանուր ազգաց սէրէն մղուած: Ուստի չթողուն որ բարեկամի և հօր այս ձայնը ունայն անցնի:

Սակայն ներկայ արիւնահեղ պատերազմի բախումը չէ միայն որ ժողովուրդները կը թշուառացնէ ու զմեզ անձկութեան ու մտահոգութեան մէջ կը ձգէ: Կայ ուրիշ մոլեգին չարիք մըն ալ, որ մարդկային ընկերութեան նոյն իսկ ուղ և ծուծն թափանցած է. և այդ ամէն գիտակից անձերու արհաւիրք կ'առթէ, ըստ որում թէ՛ ժողովրդոց շատ չարիք պատճառած է ու պիտի պատճառէ, և թէ՛ ներկայ դառնաղէտ պատերազմի սերմը կրնայ նկատուիլ: Վասն զի այն օրէն երբ մէկ-

դի թողուեցաւ քրիստոնէական իմաստութեան, պատուիրաններու և հրահանգներու պահպանութիւնը, հասարակական իրաց բարեկարգութեան մէջ, հարկաւորապէս սկսան քաղաքներն հիմնովին խախտիլ և մտքի այն տեսակ յեղաշրջում մը, և բարուց այնպիսի փոփոխութիւն մը առաջ եկաւ, որ եթէ Աստուած ինքը կանուխէն չօգնէ, ըսելու է թէ աղիտարի կորուստը արդէն վերահաս կը սպառնայ մարդկային կենակցութեան: Եւ ահա՛ ինչ որ կը դիտենք. կը պակսի մարդոց իրարու հետ ապրելուն մէջ փոխադարձ բարեացակամութիւնը. կ'արհամարհուի վերակացուաց իշխանութիւնը. անիրաւութեամբ կը վերաբերուին իրարու հետ քաղաքացեաց այլ եւ այլ դասակարգերը. վաղանցուկ և կորստական բարիքներն այնքան անյազարար կը փնտռուին որպէս թէ չգտնուին կարեւորագոյն բարիքներ, զորս ձեռք բերել հարկ ըլլայ: Այս չորս գլխաւոր շարժառիթներն կը կարծենք թէ պատճառ են մարդկային ընկերութեան այսքան ծանր խռովութեան: Ուստի հոգ տանելու է առ հասարակ որ մէջտեղէն վտարուին այդ պատճառները, այսինքն վերակոչելով քրիստոնէական սկզբունքները, եթէ իրօք դիտաւորութիւն կայ հասարակական անցուդարձերը խաղաղեցնել և ուղղութեամբ վերջացնել:

Եւ ամէն բանէ առաջ Քրիստոս Տէրն այս իսկ վախճանաւ երկնքէն իջած ըլլալով, որ սատանայի նախանձով կործանած խաղաղութեան թաղաւորութիւնը վերահաստատէ մարդոց մէջ, չուզեց զայն ուրիշ հիման վրայ կանգնել՝ բայց եթէ սիրոյ: Անոր համար յաճախ կրկնեց. *Quis maior est vobis quam deus*, զի

զի սիրիցեք զմիմեանս (Յովհ. ԺԳ. 34): Այս է պատուէր իմ, զի սիրեսցիք զմիմեանս (Անդ ԺԵ. 12): Զայս պատուիրեն, զի սիրեսցիք զմիմեանս (Անդ 17): Իբրեւ թէ ուրիշ պաշտօն և գործք չունենար, բայց եթէ յորդորելու մարդիկ որ զիրար սիրեն: Եւ այս նպատակաւ, քանի՛ քանի՛ համոզողական ցոյցեր չգործածեց: Կը հրամայէ մեզ ամենուս դէպի երկինք սեւեռել աչքերնիս: Զի ձեր մի է հայր որ յերկինսն է (Մատթ. ԻԳ. 9): Ամենուն, առանց ո՛ր և է խտրութեան ազդի կամ լեզուի կամ վիճակի, աղօթքի միեւնոյն բանաձեւը կը սորվեցնէ. հայր սեր որ յերկինսն է (Մատ. 2. 9): Նա մանաւանդ կը շեշտէ թէ երկնաւոր հայրը բնութեան բարիքները բաշխելու մէջ՝ իւրաքանչիւր անհատի արժանաւորութիւնն իսկ նկատի չ'առնուր: Զի զարեգակն իւր ծագէ ի վերայ ջարաց եւ քարեաց, եւ ա՛յն անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց (Մատ. Ե. 45): Զմեզ՝ ինչպէս իրարու՝ նոյնպէս իւր եղբայրները կ'անուանէ. եւ ամենեկին դուք եղբայր եք (Մատթ. ԻԳ. 8): Զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբայրքազմաց (Հռովմ. Ը. 29): Եւ եղբայրսիրութեան շարժելու համար նոյն իսկ անոնց հանդէպ, զորս բնածին ամբարտաւանութիւնը սովոր է արհամարհել, իբրեւ մեծ գրգիռ՝ կ'ուզէ որ ամենայնտին մարդուն մէջն ալ իր իսկ անձին արժանաւորութիւնը նկատի առնուի: Որովհետեւ արարեք միմեան յեղբայրս աշտոյիկ փոքրկանց՝ ինձ արարեք (Մատ. ԻԵ. 40): Եւ այս մտք չէ՛ր որ իր օրհասին մօտ թախանձագին պաշտօնեաց առ Հօր, որպէս զի ամէն անոնք որ իրեն պիտի հաւատային, սիրոյ զօդիւ-

մէկ ըլլային: Որպէս դու հայր յիս եւ եւ ի քեզ (Յովհ. ԺԷ. 21): Վերջապէս խաչէն կախուած իւր արիւնը մեր վրայ քամեց իսպառ, որպէս զի մենք իբրեւ ի մի մարմին զանգուած և ձուլուած զիրար սիրէինք նոյն բարեկամութեամբ, որով միեւնոյն մարմնոյ անդամներն միացած են սերտիւ իրարու հետ: — Բայց ներկայ ժամանակաց բարքերը շատ տարբեր ուղղութիւն ունին: Մարդկային եղբայրակցութիւնը հիմակուրէն աւելի երբէք քարոզուած չէ թերեւս. նա մանաւանդ չեն տարակուսիր հիմայ Աւետարանի խօսքը անտեսելով և Քրիստոսի ու Եկեղեցւոյ գործքը մէկդի դնելով, եղբայրակցութեան այդ սէրը ջատագովել աշնպէս՝ իբրեւ թէ ներկայ դարուս մարդկութեան նորագիւտ պարգեւներէն մէկն ըլլար: Այսու հանդերձ իրապէս ոչ երբեք մարդիկ նուազ եղբայրասէր գտնուած են, որքան հիմայ: Ատելութեանց տեսակներն բազմազան ըլլալուն՝ ամենավայրագ են. ազգ ազգէ՝ աւելի անխտահութեամբ քան թէ դաւառով բաժնուած են. միեւնոյն ժողովրդեւան մէջ քաղաքացւոց այլեւայլ դասակարգերու միջեւ նախանձը կը միայն իսկ առանձնականներու վարուելակերպին գերագոյն օրէնք եղած է անձնասիրութիւնը:

Կը տեսնէք, Պատուակա՛ն եղբայրք, թէ ո՛րքան կարեւոր է ամէն ճգամբ աշխատիլ, որ Յիսուսի Քրիստոսի սէրը վերստին թագաւորէ մարդոց մէջ: Այս գործը պիտի ըլլայ անշուշտ մեր յաւատու առաջագրութիւնը իբրեւ յոտկանիչ Մեր Քահանայապետութեան. նոյնը կը յորդորենք որ դուք հետուպնդէք: Զի դաւբրինք երբեք թէ՛ բա-

նիւ լսելի ընել մարդկան թէ գործքով
ցուցնել Յովհաննու ըսածը. Սիրեացումք
զնխմեանս (Ա. Յովհ. Գ. 23). Ականա-
ւոր են անշուշտ և շատ գովելի այն բա-
րեղ ործական հաստատութիւններն, որ
այնքան բազմացած են ներկայիս. սա-
կայն անոնք ա՛ն առեն միայն հիմնա-
կան օգտակարութիւն պիտի ունենան,
երբ ծառայեն արծարծելու հոգւոյ
մէջ Աստուծոյ և ընկերին սէրը. և եթէ
այդ նպատակին չտանին երբեք, ոչինչ
են. վասն զի որ ոչն սիրէ անդէն ի մա-
հու մնայ (Անդ 14):

(Շարունակելի)

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՑ ԴԷՍ
1829 Յ Յունուարի մեջ

(Շար.)

Ինչպէս որ վերը Ստեփանին պատահած
բանը ըսինք, թագաւորը էմիր կ'ընէ հրեա-
ներուն համար աղէկ մը ծեծով թէրպիյէ
ընեն, յետոյ «բաթլէ պէտէլ» քիւրէկը խաւ-
րեն և ամէն աղգի ապսպրուի իրենց մէջը
աս թիւրլիւ հարամագ և էտէպսիզները նա-
յին տէֆ ընեն. աս բանիս համար ամէն
աղգ սկսաւ իր մէջի էտէպսիզները նայիլ և
հրեաներն ալ քիւրէկը գացին:

Աս միջոցիս մէջ էլիւները Ստամպուլ գա-
լովը խօսք մը ելաւ դուրսը քի քաթօլիկի
կնիկները գացիւ Ֆրանսըզի գեսպանին ար-
զուհալ են առւեր քի իրենց առւերը ազա-
տուի տէյի. աս խօսքը ալէստէվիյէ ամէն
մարդ կ'ընէին:

Հայք չունքի շատ հեղ մտածեցին ամէն
կերպով մնացած քաթօլիքները կերպով մը
աքսորենք, բայց Աստուած չի յաջողեց, հի-
մայ աս խօսքը մեծ առիթ մը եղաւ և աս

պատճառով զատոնք հէլպիտէ կ'աքսորենք
բոնիով Պէդհեանը կ'երթայ թագաւորին սէ-
րայը սըրքեաթիպիին տեղը ի տեղը ինչպէս
որ պէտք է նէ կը հասկցնէ և ան ճամբան
բանը կը մտնայ քի կընամ ըսել որ մարդ
պիլէ կը գլխատուէր. ըսածը աս էր. «էֆէն-
տիմ, զալան քաթօլիքէր կիտիպ Ֆրանսըզ
էլիսինէ արդուհալ վէրիպ նիյազ էթմիշէր
քի, աման էֆէնտիմ պիլի շու գալում վէ
սինսիզ բասիշանըն էլինտէն գուրթարըն,
զէրէ արթըզ տալանանագ թաքէտիմիզ գալ-
մասը, պիզ սիզին կէլմէնիզէ պէքէր իտիք
քի հալիմիզի պիլտիքէլիմ, Վէ պիր տէ էֆէն-
տիմ պու գատար թէքտիր վէ թէյտիպ օլուն-
տու պու թագըմա, կինէ իսլահ օլմայրպ
քէօշէ պուճաք մահալլէրտէ պէշ օն թանէ
հանուաի քաթօլիք էթմիշէր, վէ պունտան
մատէ կէնէ էվվէլքի կիպի քաչըպ քաչըպ
Պէյ օլլունա կիտիպ կիզլէնիպ գալըպ օթու-
րույօրլար, վէ կինէ էվվէլքի կիպի սէրպէսթ
ֆրէնկ քիլիսէսինէ կիտիպ այընլարընը իճրա
էտիպ աէվլէթին էմրինի տիյնէմէյօրլար:
Մալիւմիւնիւզ օլսունտա էֆէնտիմ սօնդրա
պիզէ նիշին խապէր վէրմէտինիզ տէյի թէք-
տիր օլմայալըմ, էմիր սիզին տիր էֆէնտիմ»:

Սըրքեաթիպին աս բանս լսելով շատ կը
տաքնայ, ու կ'ըսէ ուր տեղ որ քաթօլիք
կայ ամէնքն ալ Գում գաբու գալէյի մէջ
խօթելու է քի հէմ իթաաթ ընեն հէմ ալ
կարող չըլլան ուրիշ տեղ երթալու:

Հայոց միւրատը մէյ մը քաթօլիկը աք-
սորել տալ էր մէյ մըն ալ ամէն տեղի քա-
թօլիկի տուները ծախուեցան, Օրթագեղի
տուները և ամէն մարդուն իրենց խանութ-
ները, օտաները, եւլն. խիւ լասա նէ տուն
նէ տեղ, Ալի բաշա բարայի խըտար տեղ մը
քաթօլիկը չունենայ քի պիւթիւն պիւթիւնէ
փլշի ու կործանի, զէրէ Օրթագեղի քաթօ-
լիկի տուներուն և խանութներուն հախին
բան մը չի կար: Սըրքեաթիպին քանի մը
մարդիկներու աս բանս կը պատմէ և մինչեւ
աս կերպը չըլլայ նէ քաթօլիկներու՝ պիտի
չըլլայ: Եւ մազ մնաց որ յետին շարն յոն
զառաջընը պիտի ըլլար: Աստուած ամենա-
բարին իւր սղորմութեամբը թող չի տուաւ:

ինչ եղաւ չիյտենք. շատ թիւրլիւն իմացանք
կերպ կերպ, բայց որոշ չիմացուեցաւ քի չի
յաջողելուն պատճառը ինչ եղաւ :

Բայց կրնամ ըսել որ տէրութիւնը աս մի-
ջոցին մէջ շատ նեղն էր. ուստի տէրութեան
պատերազմէն՝ ժամանակ չունեցան աս բանս
ընելու և լսեցինք քի կէօյա թապաւորը ը-
սած ըլլայ քի աս բանը ընենք նէ կրնայ ըլ-
ալ բան մըն ալ ասկից ելլայ, հիմայ մնայ
աս բանս :

Բայց բանով մը կրնամ աս խօսքը խալաթ
ընել. քաթրլիկները տքտորած ժամանակնին
ո՞վ կարող էր հայոց երեսը նայելու : Երբ որ
ժամանակ անցաւ քանի մը անգամ ալ ճահտ
ըրին, կարող չեղան նէ ընելու, կաթօլիկ-
ները կտոր մը նէֆէս առնելով սկսան տէր-
պէսթ հայոց երեսը նայելու և Պէ՛ տէյ ինտիք
ըսելու : Հայք տեսնալով աս բանս դացին
պատրիարքարանը խաղեցին ըսելով. Ճա-
նըմ ի՞նչ է կաթօլիկներուն ըրածը, գացող-
ները խռոյումճիներուն վարպետներէն էր,
առաջ մեզ վարպետի ու մեծի տեղ կը դնէին
հիմայ կէնէ գլուխ վերուցին, մեզ չեն սե-
պեր կոր. էվէլ պակաս խօսքեր կ'ըսեն կոր,
իշտէ մենք քեզի խապար կու տանք, սօղրա
մեզի ինչո՞ւ խապար չտուիք չըսէք : Պատ-
րիարքը կ'ըսէ ասոնց. Դուք գացէք տեղեր-
նիդ. մենք կը նայինք եւ զրան ալ թագրի
կ'ընենք :

Հայք կ'ուզէին բանով մը զրան թագրի
ընել, առաջուց ալ Պէզճեան Յարութիւնը
ներս հասկցուցեր էր : Մաածեցին ըսելով.
զրան մենք թագրի կ'ընենք, դուռն ալ թա-
գաւորին թէհլիդ կ'ընէ, առաջուց ալ հոն
հասկցուցեր ենք հէլպէթթէ աս բանիս հրա-
մանը կ'ելլայ ըսելով պատրիարքը բաշային
Դրան այսպէս որ վերը ըսի նէ տահա էվէլ
կերպով թագրի ըրաւ :

Բաշան և բոլոր զրան մեծերը աղէկ գի-
տէին եղածը ու գացածը, թուղթը տանողին
սքգողելով դռնէն ըսին. Դացէք բաներնիդ
տէրութեան գլուխը կրակ կը վառի կոր հի-
մայ, այսպէս բաներուն ժամանակը չէ ըսե-
լով վռնտեցին : Աս կերպ աս բանը դառնա-
լով, վերը ըսածս խալաթ եղաւ քի հիմայ

աս բանիս ժամանակը չէ, և ընելովնիս չըլ-
լայ քի տակէն ուրիշ բան մը ելլայ, զէրէ
մէկալ տէրութեանց կրկին պիտի դուչէր. ի՞նչ
և իցէ Աստուած Փախըր Փուխարային ողոր-
մեցաւ :

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈՐԵՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գրք Ա. — Գլ. Ի. Գ. — Դատաստանի եւ մեղաց պատիժ-
ներուն վրայ :

(Շար.)

Ան ասեմ աւելի պիտի ուրախացնեմ մահուր եւ քա-
րի խղճմանը, քան խաղաղութն փոխադարձութեանը :

Ան ասեմ աւելի պիտի կշռեմ ընչից արհամարհու-
րիւնը, քան հողածիւններու ամեն գանձ :

Ան ասեմ աւելի պիտի միտքարուխ յերմեանց ա-
ղօրսի վրայ, քան համադամ կերակուրներու վրայ :

Ան ասեմ մանաւանդ պիտի ուրախանամ յոռութեան
պահած ըլլալուդ, քան երկար իստակցութեան վրայ :

Ան ասեմ աւելի պիտի արժեն սուրբ գործեր, քան
քաղաքիւ գեղեցիկ խօսքեր :

Ան ասեմ աւելի հաճելի պիտի անցնի խստութեան
կեանքը ու դառն ապաշխարութիւնը, քան ամեն երկ-
րաւոր գուարճութիւն :

Սորվե՛ հիմա փոքր քաներու համբերել, որպէս զի
ան ասեմ աւելի ծանրեմքն կարենան ազատուիլ :

Հոս նախ փորձե՛ քե ի՞նչ քանի կարող պիտի ըլ-
լաս վերջը :

Երբ հիմա ա՛յնչպի պզտիկ քանի մը հազար կրնան
տոկայ, հապա ի՞նչպիս պիտի կարենան յախենեական
սանցանքներու հանդուրժել :

Երբ այժմ քերէս վիշտ մը ա՛յնքան անհամբեր կ'ը-
նէ զհեզ, հապա ի՞նչ պիտի ընէ ան ասեմ գեհեղը :

Տե՛ս ուրեմն, լիս կրնար յիշատի ունենալ երկու
ուրախութիւն միանգամայն, այս ինքն՝ գուարճանալ
հոս աշխարհիս մէջ եւ յետոյ քաղաւորել Քրիստոսի հետ :

Ս. ԲԵՌՆԱՐԿՈՍ, ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Երբ Աստուած յանկարծական մահուամբ
պատժեց այն անձը, որուն հպարտութիւնն ու յա-
մառութիւնը կը խռովէին ամբողջ քրիստոնէայ աշ-
խարհը, Սուրբ Բեռնարդոս Հռոմ դարձաւ և հոն
վերջին հարուած մը տուաւ երկպառակութեան
Հերձուածողները Անկղեւտոսի մահէն ետք անմի
ջապէս անոր յաջորդ մը ընտրած էին և անուանած

էին զայն Վիկտոր Գ. Ասիկայ գիշերը գնաց մեր Սուրբ տեաներու: Սուրբ Հասկոյց իւն թէ ո՛րքան տաղի և զգուշի պիտի ըլլայ Աստուծոյ և մարդոց եթէ ընդունի այն ընտրութիւնը, որուն ոչինչ ըլլալուն վրայ տարակցա չկար: Ապա ստիպեց զինքը որ անմիջապէս մերկանայ իր երեւակայական քահանայապետութեան ամէն նշաններէն և տարաւ զայն օրինուոր Քահանայապետին ոտքը: Վերջինս մարդասիրութեամբ ընդունեցաւ զայն և ներում շնորհեց: Բեռնարդոս գովեստներէ և պատիւներէ խոյս տալով՝ նորէն Գլէրլոյ գնաց և հոն շարունակեց Երգ-երգիցն վրայ սկսած ծառերը:

Սուրբ Բեռնարդոս ոչ միայն հերձուածի խնդրին մէջ՝ այլ ուրիշ ամէն ծանրակշիւ գործերու մէջ ալ մեծ ծառայութիւններ մատուցեց Եկեղեցւոյ: Մեծ համարձակութեամբ իբր իննուան նամակ ուղղեց Իննովկենայիս Բ., Կեղեստինոս Բ. և Եւգինէոս Գ. Քահանայապետներուն՝ իրենց պարտականութիւնները յիշեցնելու համար: Երբ Լուդովիկոս Յոյժ թագաւորը իրենց աթոռներէն հեռացուց Թուրի արքեպիսկոպոսը և Բարիլի եպիսկոպոսը, Սուրբ Աստուծոյ կողմէ մեծ պատիժներ սպառնացաւ անոր եթէ բրածը չուղղէ. և Քահանայապետին առջեւն ալ պաշտպանեց նոյն եպիսկոպոսները: Շամբուրիայի Թիպպիզ բաղաւաղատ կոմար, որ իր մեծ բարերարն էր, գահավեժ գառատատնով մը բոլորովին ընչազուրկ բրած էր աշնուականին մէկը: Սուրբ անոր գրեց այս մասին իր ազգու օճով, ո՛չ միայն մէկ այլ երկու երեք րոնգամ և գրելէ չգաղթեցաւ մինչեւ որ զանիկայ՝ բրած տանիքաւութեան հատուցում ընելու բարկեց:

Ինք հաշտեցուց այս կոմար Լուդովիկոս կայսեր հետ, և Մէջի բնակիչները՝ իրենց դրացի իշխաններուն հետ իր նամակներէն կը տեսնուի որ թէ՛ Եկեղեցւոյ և թէ՛ Պետութեան մէջ տեղի ունեցած ամէն գործերու մասին իրեն խորհուրդը կը հարցունէր և ինք կը ստիպուէր իր միաքը յայտնելու և յաճախ վերջին որոշողութիւնը տալու:

Իր ժամանակ երեւան ելած ամէն մարդութիւններու դէմ՝ հաւատքը պաշտպանեց անյաղթելի կորովով: Պետրոս Ապելար և իր աշակերտը Առնոլտ Պրէշիս՝ կեղծուպատիր ներուժիւններով կը նորոգէին Արիոսի, Նեստորի և Պեղագիոսի վարկապետութիւնները: Սուրբ, որ Ապելարը կը սիրէր անոր խելքին և անոր վրայ երեւցած ինչ ինչ բարեպաշտական երեւոյթներու համար, նախ առանձնակի՝ ազգարարեց անոր որ իր զգացումներն ուղղէ, և անքակտելի կերպով յայտնեց միայն Ս. Հայրերու վարդապետութեան: Բայց երբ այս յանձնապատասխան արհամարհեց իր յանդիմանութիւնները և յանդգնեցաւ զինքը վեճի գրգռելու, Սուրբ գառնապարտիչ առաւ զանիկայ նախ Սանի մէջ երեք գուռաներու համախառն ժողովով, և ետքը Հաւթի մէջ Խնովկենայիս Բ.էն, որուն նամակ մը գրեց նոյն անընտնաբերը հերքելու համար:

Սուրբը պայքարեցաւ ապա Բուաղիէի եպիսկոպոս Ժիլպէր աբ լա Բորէի մարդութիւններուն դէմ: Բեռնարդոս ամենէն աւելի եռանդով ջանաց բնաջինջ ընելու հերետիկոսութիւնը Հիերիկոս անուանով կարգաւորող կրօնաւորի մը, որ Լանկըտքի մէջ Եկեղեցւոյ դէմ բուռն պայքար կը մղէր, հարուածելով Սուրբ Խորհուրդները որ անոր գանձերն էն, և քահանաները որ անոր պաշտօնականն են: Սուրբ Բեռնարդոսի խօսքը ա՛յնքան արդիւնաւոր և ազգու եղաւ ամբողջ Լանկըտքի մէջ որ նոյն տիրաւորէր իր մասին, Նոյն իսկ անոր հետեւողները անոր վրայ յարձակեցան, զանիկա բռնեցին և շղթայի զարնելով Թուրուզի եպիսկոպոսին ձեռքը տուին:

ՀԻՆ ՎԱԿԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ

(Թարգմանուած լատին քնագրէն)

Նամակ զոր 17 Նոյ. 1712ին գրած է Վեր. Հ. Յակոբ Վիլլոյ: Յիսուսեանց Կարգին, առ Արհի. Սանժի-րի, Եպիսկոպոս Նարդոյի, Մրոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի Մատուցներուն՝ Հայերի մատուցուած պաշտօնին ու յարգանքին վրայ:

Արհիապատիւ Տէր,

Որովհետեւ Արհի. Տէրութիւնն Ձեր ապրտք դրաւ խնդի, որ՝ թէ՛ այն պաշտաման վրայ զոր Հայք սովորեցան մատուցանել Աստուածայինն Գրիգորի՝ Հայոց առաջին Պատրիարքի, և թէ՛ ասկէ շուրջ 18 տալի առաջ ի Հայաստան՝ առ Յիսուսեան Հարս զրկուած նոյն Սուրբին Նշխարաց վրայ ի՛նչ որ գիտեմ, համառօտիւ տեղեկացնեմ Ձեզ, որք Ձեր Արհիապատիւ Տէրութեան ա՛յսքան բարեպաշտ հրամաններուն յօժարակամ կը հնազանդիմ:

Յամին 1692, երբ ես կը գննուէի ի Կարին (Էրզրում), որ Թուրք Պետութեան Մեծին Հայոց գլխաւոր քաղաքն է, և կը տեսնէի հոն բնակող բազմաթիւ Հայոց նշաւաւոր եռանդն ու փոյ՛ր՝ որովհետեւ քրիստոնէական օրինաց կարգու արքերն, ա՛յսպէս որ շատերը մերժելով Միաբնակայ մոլորութիւնները՝ կը մանէին ի ծոց Հոռոմական Ս. Եկեղեցւոյ, եւ, անոնց բարեպաշտութիւնը աճեցնելու և զարգացնելու նպատակաւ, Հոռոմ նամակ զրեցի մեր Յիսուսեան

Հայրերէն իմ մտերիմ մէկ բարեկամս՝ ու թախանձագին աղաչեցի իրեն, որպէս զի Աստուածային Գրիգորի՝ Հայոց առաջին Պատրիարքին Նշխարներէն քանի մը նշանաւոր կտորներ խնդրելով և ընդունելով՝ ինծի ղրկէր ի Կարին. քանզի այսպէսով կը կարծէի թէ՝ Ուղղափառ Հաւատքը ընդգրկելու համար Հայոց մեծ գրգիռ պիտի ըլլար, եթէ կարող ըլլային ներկայ ունենալ և յարգանք մատուցանել Նշխարներուն՝ իրենց Ամենասուրբ Պատրիարքին, որմէ Հաւատքի լոյսն առաջին անգամ ընդունած ըլլալուն վրայ կը պոնծան, որով և զայն առ հասարակ Լուսաւորիչ կը կոչեն:

Մինչդեռ ի Հռոմ ասով կը զբաղէին, տարին սահեցաւ անցաւ, և վերջապէս 1694ին Դեկտ. 8ին հասան ինծի ի Կարին ա՛յնչափ ժամանակ կարօտով սպասուած Նշխարները, վկայական թղթովն՝ Վսեմ. Տ. Յակոբայ Տիտղոսի Սրբոյն Պետրոսի և Մարկելոսի, Երեւոյն Կարդինալի Քանդէլիի, Արքեպիսկոպոսին Նաբոլիի, որ ի Փոքր և Մեծ Հայս առաքելութիւն կատարող Յիսուսեան Հարց ղրկէր էր վերոյիշեալ Նշխարները, նոյն Հարց ի նպատակ միջնորդած ըլլալով Արհի. Տ. Անտոն Սանֆէլիչի, որ նոյն ժամանակ Նաբոլիի Մայր Եկեղեցւոյն Կանոնիկոսն էր, իսկ հիմա Եպիսկոպոսն է Ներիտոնայ, ուր զշխաւոր պաշտպան է նոյն ինքն Աստուածային Գրիգոր Հայոց Եպիսկոպոսապետ:

Նոյն միջոցին կը պատրաստուէի Կոստանդնուպոլիս երթալու՝ ի կարգադրութիւն ինչ ինչ զործոց որ կը պատկանէին առաքելութեանց. վերոյիշեալ Սրբազան Աւանդը հետո տարի ի Կոստանդնուպոլիս, ուր այս Նշխարները իբր ան ըստ օրինի վաւերացուելով և հաստատուելով յԱրհի. Տ. Գասպարայ Սբիկա, Կոստանդնուպոլսոյ Եպիսկոպոսէն և Պատրիարքական Փոխանորդէն, առաջին անգամ անոնց յարգութիւն մատուցուելու սկիզբ եղաւ ի 15 Օգոստոսի 1695, ի Ղալաթիա, որ արուարձան է Կոստանդնուպոլսոյ, Եկեղեցւոյ Ս. Բենեդիկտոսի, որ Յիսուսեան Հարց առաքելութեան

կը պատկանի: Հանդիսաւոր Պատարագն ըրաւ Հայ Վարդապետ մը. ներսողեան քարոզ խօսեցաւ նոյն ազգէն ուրիշ Վարդապետ մը: Մեր Եկեղեցին վազած եկած էր խռնոնթ թաց բազմութիւն մը Հայոց՝ անթիւ անհամար, որոնք Պատարագէն վերջը, ոչ թէ ոտքի վրայ, այլ գետնամած սողալով ի գուճս, մօտեցան Ս. Սեղանին՝ արք և կանայք, ու սքանչելի յարգանքօք ու առտուած սպաշտութեամբ իրենց Լուսաւորչին սրբազան Նշխարներն համբուրեցին ու մեծարեցին:

Չորս տարի վերջը, երբ Կոստանդնուպոլսէն վերադարձայ ի Կարին և անտի մեկնեցայ ի Սպահան, որ Պարսից Պետութեան թէ՛ տաջին և թէ՛ թագաւորական Բազաքն է, տեսնելով որ հոն բազմաթիւ Հայեր կան, և թէ հոն կարելի էր կրօնական պաշտամունքը շատ աւելի ազատօքն ու չքնադատօքն և սպանդութեամբ կատարել, քան ի Կարին, որոշեցի Ս. Գրիգորի Նշխարները յանձնել Յիսուսեան Հարց Ս. Յովսէփ Եկեղեցւոյն, որ կառուցուած էր Սպահանու հիանալի արուարձանին մէջ որ Ճուլֆա կը յորձորջուի, ուր կը բնակին բոլոր Հայերը:

Սակայն այս միտքն զիս շատ կը մտատանջէր՝ թէ Ս. Նշխարները ա՛յնքան ցած արծաթեայ տուփի մէջ ղեւեղուած էին՝ որ, խորանին վրայ դրուած պահուն հազիւ կը տեսնուէր. ոյր վառն մեծապէս կը փափաքէի որ անոնք փոխադրուին աւելի բարձր ուրիշ սրբատուփի մը մէջ, որմէ կարենային հանդիսատեսները դիւրաւ նկատել զայն: Իմ փափագանցս լրանալուն հաճեցաւ Ամենակալ Տէրը, Որովհետեւ 1699 տարուան գարնան վերջերը Սպահան եկաւ Արհի. Պետրոս Պօղոս Բալմա, Արքեպիսկոպոս Անկիւրիոյ, ի Կարգէն Բոկոսն Կարմուխեանց, որ Պարսից թագաւորին պալատան մէջ՝ թէ՛ Ծայրագոյն Բահանայապետին, թէ՛ նաեւ Կայսեր նուիրակի պաշտօնը կը կատարէր: Խօսեցայ իրեն յիշեալ Նշխարաց փոխադրութեան վրայ, զոր խոստացաւ սիրով և յօժարութեամբ կատարել: Այն ատեն աշխատեցայ շքեղ տուփ մը չինել տալու,

որչափ որ կարելի էր այն երկիրներուն մէջ . և այն 1699 տարուան Հոկտեմբերին 18ին տեղի ունեցաւ Ս . Նշխարաց փոխադրութիւնը : Ներկայ էին բազմաթիւ Հայեր . մեր Եկեղեցիին մէջ հրապարակական պաշտամանքներ տեղի ունեցան , յորում Աստուածայնոյն Գրիգորի Նշխարներն Ամպհովանիի ներքեւ կը տանէր Արհի . Արքեպիսկոպոսը . Ամպհովանիին չորս անկիւններէն կը բռնէին չորս ազնուազգի զլխաւոր Հայեր , որոնց քովէն կը քալէին ջանքով ուրիշ չորս Հայ Աւագանիներ . Ժողովրդեան ստուար բազմութիւն մը կը հետեւէր և ամբողջ այն օրը հոգեւոր ուրախութիւններով լի եղաւ :

Նոյն այն սրբազան Նշխարքը Յիսուսեանց վերոյիշեալ Եկեղեցւոյն մէջ մեծապատուով կը պահուին , և ի Հայոց կարի երկիւղածօրէն կը մեծարուին : Ս . Գրիգորի տօնը հոն կը տօնուի Հոկտեմբերի 1ին և կը կատարուի նաեւ Ութօրէքը :

Արհի . Տերութեան Ձեռոյ

Ամենախոնարհ եւ Ամենահազանդ ծառայ
ի Քրիստոս

ՅԱԿՈԲ ՎԻԼԼՈՒ

ի Կարգէն Յիսուսեանց

Ի Հոռոմ, 17 Նոյ . 1712

Ծան . Այս նամակն օրինակուեցաւ այն ցրիկն որ կը կոչուի՝ «Պատմութիւն կենաց, Մարտիրոսութեան եւ Հրաշից Ս . Գրիգորի Արքեպիսկոպոսի եւ Նախագահի Հայոց», մատենագրուած Անդոն Մարիս Պոնուլլի Յիսուսեան Հայրեն, սպարուած ի Հոռոմ յամին 1717 (հշ 200-203) :

Ի Հոռոմ, 8 Նոյ . 1914

† ՊԵՏՐՈՍ ԳՕՅՈՒՆԵԱՆ
Արքեպիսկոպոս Փաղկեղոցի

„ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԻԻՆԸ“

ԱԻՅՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Հեղինակութիւն I . Ը . ի

Աստուածաշնչական յանձնաժողովին իմ ներկայացնելիք քեզիս մէջ առաջադրած նպատակս եղած էր քննել ու ճշգրէ թէ ի՞նչ է բուն աւետարանական ըմբռնումը «Աստուծոյ

Արքայութեան» : Ծանօթ է ամէնուն թէ ո՛րքան կարեւորութիւն ընծայուեցաւ այս բացատրութեան արդի աստուածաշնչի մեկնիչներուն քով , և ինչպիսի՜ խնդիրներ յարոյց տն՝ մանաւանդ անկախ քննադատներու շարքին մէջ : Բաւական է միայն յիշատակութիւնն ընել «Աստուծոյ Արքայութեան» , մէկէն անոնք կը մտածեն սեղմօրէն ներքին աւետարանական արքայութեան վրայ , որու մէջ կայացած կը կարծէ Հարնաք՝ քրիստոնէութեան էութիւնը — և կամ բոլորովին հակառակը , կարծելով թէ ան կը նշանակէ անընդմիջապէս գալիք երկնից արքայութիւնը , և որու տարածիչը եղաւ Փրանսայի մէջ Մ . Լուաղի :

«Աստուծոյ Արքայութիւնը» (Բապիլիս քու թեռ) յիրաւի , սիրտը կը կազմէ Քրիստոսի քարոզութեան — կրնանք ըսել նոյնիսկ թէ իր պաշտօնն իսկ եղած է : Եւ իրօք , Փրկչին կենաց մէջ ամէն ինչ յղացուած ու կարգաւորուած է Արքայութեանը տեսակէտով , ամէն ինչ , մինչեւ իսկ իր մահը՝ նոր դաշինքի արեան հեղումովը ամէն ինչ , մինչեւ իսկ աշակերտաց պաշտօնը՝ երթալ Արքայութիւնը քարոզելու ամէն արարածոյ : Որով՝ Արքայութեան գաղափարն առաջինն է որ կը ներկայանայ ամէն անոր՝ որ կ'ուզէ ճշգրիտ գաղափար մը կազմել Փրկչին վարդապետութեան մասին , և այս մայր յղացման շուրջ եղած ո՛ր և է սխալ՝ անշո՛ւշտ կրնայ շատ ծախիկ համեմատութիւններ առնուլ Նոր Կտակարանի իմաստին թափանցելու համար : Մանաւանդ երեք առաջին Աւետարաններուն մասին եղած ըլլալով յարձակումներն ու վիճարանութիւնները , ես սլ ի մասնաւորի անոնց նուիրեցի իմ այս աշխատութիւնս : Բայց ասով հանդերձ , չհրաժարեցայ բնաւ միեւնոյն ատեն բաղդատելէ կամ համեմատելէ Ս . Յովհաննու և Նոր Կտակարանի միւս գրուածոց հետ՝ երբ և ո՛ւր որ անկ եղաւ :

Աւետարանական պատգամաւորութիւնը , ճիշդ ինչպէս կը լսենք մեր Աւետարաններու առաջին էջին մէջ իսկ Քրիստոսի և կամ անոր յառաջընթաց կարապետին չրթներէն , մեզ ուղղակի կը պնէ բուն իսկ հարցին հան-

դէպ: Ապաշխարեցե՛ք ըստած է. զի մեռնալ արխայութիւն երկնից: Եւ զիւրին է ապացուցանել թէ այս աւետիսը բնա՛ւ երբէք ապշանք չպատճառեց զայն լսողներուն: Ձեռք տեսներ թէ, Փրկչին շուրջը զանուազներէն մէկը երբէք հարցուցած է անոր թէ ի՞նչ կը նշանակէր երկնից արքայութիւնը, եւ կամ թէ երբէք գոյութիւն ունէ՛ր ան: Եւ սակայն այս յղացումը մեզի ապշանք կ'առնէ, մեզի՝ որ այնքան հեռու կը գտնուինք ամբողջ ժողովուրդի մը ակնկալութենէն, մեզի՝ որ այնքան համակ ենք այն ժամանակի իրերուն մէջ: Ձէ՛ որ, նոյնիսկ կը վիճինք թէ ի՞նչպէս պէտք էր թարգմանել մեր արդի լեզուներով «Արքայութիւն Աստուծոյ» բացատրութիւնը: Արքայութիւն Աստուծոյ պէտք է ըսել՝ թէ իշխանութիւն Աստուծոյ: Նոյն ինքն մեր Փրկիչն ալ արդեօք արխայութիւն Աստուծոյ բացատրութիւնը կը գործածէր՝ թէ արխայութիւն երկնից:

Բարեբախտաբար բաւական հեշտ է, նոյն ատենի անկանոն մատենագրութեան շնորհիւ, մէջտեղ հանել այն ընդհանուր խմատները որ Փրկչին ժամանակակից սերունդին համար կը բովանդակէր «Արքայութիւն Աստուծոյ» բացատրութիւնը: Ընդհանուր իմաստները կ'ըսեմ, զի ամէն ոք գիտէ թէ այդ աղքատ ու խառնակ մատենագրութիւնը որքան յղացման տեսակէտով բացարձակ տարբերութիւններ կը ներկայացնէ՝ երբ քիչ մը մանրամասնութեանց մէջ մտնել ուզուի: Նոյն ատենները ամէն անհատի ուղտածն էր որ իրաւանց սկզբանց վրայ արդարութիւնը հիմնելով՝ Աստուած իր կարողութիւնը յայտնէր. և որովհետեւ նման աստուածային յայտնութիւն մը յղացուիլ կարելի չէր՝ առանց Աստուծոյ միջամտութեան ի նպաստ իր հաւատացելոց, ուստի, թէ՛ Աստուծոյ և թէ՛ անոր հաւատացելոց համար կը սպասէին փառաւոր ու չքեղ թագաւորութիւն մը՝ ինչպէս էր իրաւամբ «Աստուծոյ Արքայութիւնը» Այս է ահա այն մեծ ակնկալութիւնը զոր կը գտնենք մենք ինչպէս Յայտնութեան Գրքին՝ այսպէս ալ բարունական պրութեանց մէջ: Բայց որովհետեւ ո՛չ գի-

տէին թէ ինչ կերպ աստուածային յայտնութիւն մը պիտի ըլլար աս, ո՛չ ալ թէ ինչպիսի՛ էին իր իշխանութեան անցնելուն և իր գործունէութեան թէութիւնները, կանուխէն ներս սպրդեցաւ ամէնէն խոր և ամէնէն անդամանելի կարծեաց թերութիւնները: Սակայն, մէկ կէտ միայն իբր ապահով կը նկատուէր, այսինքն թէ, Աստուծոյ հաւատացեալք՝ անոնք որ մասնակից պիտի ըլլային անոր յաղթանակին, ուրիշներ չէին՝ եթէ ոչ Աբրահամու սրգիքը, կամ գէթ հաւատացեալ Իսրայէլացիք, որոնց յաղթանակը զիւրին էր ըմբռնել, այնպէս որ, մինչեւ իսկ ԺԳ. Սաղմոսին մէջ, օրինակի համար, կարելի կ'ըլլար ժողովրդական հանգամանք մը սալ անոր:

Սոյն ակնկալութիւնն արդէն, անհիմն չէր: Վաղուց սաղմոսներն ու մարգարէութիւնք կ'աւետէին արդարութեամբ ու փառքով լեցուն ապագայ մը: Բայց իրենց միտքը՝ նիւթապաշտ և անձուկ սրտերէ լաւ ըմբռնուած չըլլալով, խորապէս խաթարուած էր, թէեւ դեռ կը բովանդակէր ան Իսրայէլի ակնկալութեան հիմնակէտը: Նոյն իսկ կային քանի մը հոգիներ գէթ՝ որոնք անաղարտ պահած էին զայն: Մանկութեան Աւետարանը կ'ըսէ արդէն բաւական յայտնի թէ ինչպիսի՛ զուտ հոգեկան գերբնական ապագայ մը կ'ակնկալէին Սիմոն, Չաքարիա և Յիսուսի մայրը Մարիամ:

Ս. Յովհաննէս Մկրտիչի աւետած արքայութիւնը իր քով խռնուող բազմութեան արդարեւ ակնկալուած փրկութեան նոր դարն էր: Մանաւանդ թէ արդէն իսկ հասած նոր դարը, այն դարը՝ որ սկսելու վրայ էր Մեսիայի գալստեամբը: Բայց այս արքայութեան, այս նոր դարին համար, ո՛չ մարմինը, ո՛չ Աբրահամու սերունդ ըլլալը, ո՛չ ալ փարիսեցւոց օրինական արդարութիւնը բաւականաչափ պատրաստութիւն մը չեն կազմեր: Հարկ անհրաժեշտ է սրտի ամբողջական դարձ և անկեղծ զոյնումի մը (մեքաւնոյա) պատուիրերը: Առանց ասոր անկարելի էր մաս ունենալ Մեսիայի մկրտութեան ի Հոգին Սուրբ ի սկզբան անդ նոր դարուն:

Մարգարէք նախագուշակած էին սոսկալի դատաստան մը՝ զոր մոռցած չէին բնաւ անվաւեր գրութեանց հեղինակները։ Սուրբ Յովհաննէս ալ ձեռք կ'առնուէր այդ հիմնականէտը, բայց զայն կը պատշաճեցնէ ուղղակի իւրաքանչիւր սնահատի բարոյական արժանեաց։ ամէն մէկ ծառ պիտի քննուի, և իր պտուղներուն համաձայն կտրուի՝ կամ պահուի։ ամէն մէկ որայ պիտի ծեծուի, և ըստ որում ցորենահատ կամ յարդը ելնէ՝ պիտի նետուի անշէջ հրոյ մէջ և կամ մացուի Մեսիայի «համբարանոցները»։ Ասկէ բացորոշ կը տեսնուի թէ կարելի չէր ա'լ աւելի յայտնապէս հաւատաւորիլ գերբնական բնոյթը վերահաս արքայութիւն։ Եւ այսպէս հրէական չըջանականերու անձկութիւնը խորտակուած է արդէն, և երբ զայ Մեսիան՝ ուրիշ բան չպիտի ունենայ ընելիք եթէ ոչ աւետարանական քարոզութիւնն սկսիլ ա'յն կէտէն՝ որ թողած էր Ս. Յովհ. Մկրտիչ։ Միայն թէ Փրկիչը զայն սկսաւ Թէոփիլակոսի և Մալտոնատոսի բնապիրներուն համաձայն։ ոչ լուծանելով՝ այլ լնելով։ ոչ եղծանելով՝ այլ կասարելով։

(Շարունակելի)

ԽՄԱՏՈՒԹԵԱՆ ՍԿԶԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՄԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Է.

«Բարի հայր, բարի ամուսին բարի սէր, առանց զարուբեան»։

«Պատուեցէ՛ք ձեր ծնողքը, մանաւանդ իրենց ծերութեան ժամանակ»։

Բարի հայր, բարի ամուսին, բարի սէր, առանց զարուբեան»

Բ.

Բարի ամուսին

Հայրեր՝ և մայրեր՝ որ ձեր ընդգրկած վիճակին մէջ կ'ուզէք քիչ մը բարօրութիւն վայելել, և ընդունիլ Աստուծոյ այն օրէնքները, որոնք ձեզի կարեւոր են՝ ձեր այդ

վիճակին մէջ սրբանալու համար, պահեցէ՛ք միշտ ձեր մէջ այն ակնածանքը, զոր ձեր զիրքն ձեզմէ կը պահանջէ։ յիշեցէ՛ք այն խոստումները, զորս փոխադարձաբար իրարու կ'ընէիք ձեր ամուսնութենէն առաջ, և ձեր ընթացքը անոնց համակերպեցէ՛ք։ Դուք ձեր առջեւ արգարացուցէ՛ք ձեր ընտրութիւնը։ ձեր սէրը վերականգնացուցէ՛ք այն համոզմամբ թէ՛ ձեզի հետ սիրոյ զօդերով միացածէն դուրս ո'ր և է անձ, կրնար զաղանի թերութիւններ ունենալ, որոնք զձեզ ձեր արդի վիճակէն նուազ երջանիկ պիտի ընէին։ Վարժուեցէ՛ք մտածելու թէ, իւրաքանչիւր ոք իր թերութիւններն ունի, և թէ մենք իրարու թերութեանց շատ բաներու մէջ աչք զոցելու ենք, ընկերութեամբ ապրիլ կարենալու համար։ բարի յատկութիւնները՝ այնպէս չեղածները թեթեւցնելու և տանելի ընելու են։ Սէրը, համբերութիւնը և համակրութիւնը, եթէ աւելի լաւ մշակուած ըլլային, ընտանեկան շատ մը խռովութիւնները պիտի խափանէին, ինչ որ զայն կը հաստատէ Սուրբ Օգոստինոսի մօր՝ Սրբոյն Մօսիկայի ընթացքը։ Ինքն ընտիր կրթութիւն մը առած ըլլալով, և իր տղայութենէն ի վեր իւր ծնողաց հնազանդութեան ներքեւ ապրելով իւր ամուսնոյն կամ մաց հպատակելու համար նեղութիւն չկրեց։ Անոր կը հնազանդէր։ կ'ըսէ Սուրբ Օգոստինոս, իբրեւ իւր տիրոջ և պետին։ Ինչ նեղութիւն ալ իրեն պատճառէր, երբեք այս մասին իրեն հետ ամենափոքր վէճ մըն ալ չունեցաւ։ Բայց բան մը զանց չէր ընել զինքը սիրով ուղղելու և դարձի բերելու համար, ինչու որ հեթանոս էր տակաւին։ Եւ ատոր յաջողելու բախտն ունեցաւ, եւս առաւել իւր քաղցրութեամբ և համբերութեամբ, քան թէ իւր խօսքերով։ Ինչ որ զինքը ոչ միայն հաճելի և սիրելի կ'ընծայէր իւր ամուսնոյն, այլ եւ յարգանաց և հիացման արժանի։ Թէպէտեւ ամուսինը զինքը շատ կը սիրէր, այսու հանդերձ յաճախ իրեն հետ սաստկութեամբ և բարկութեամբ կը վարուէր։ Բայց ինքն իրեն կանոն մը դրած էր։ անոր զայրացած միջոցներուն երբեք իրեն

չհակառակիլ, և երբ յանիրաւի կիրք կ'ելլէր, կը սպասէր որ անոր բարկութիւնը իջնէ, և այն ատեն իւր ընթացքը անոր կը պարզէր: Երբ ուրիշ կանայք իրենց ամուսիններուն դէմ կը գանգատէին, ինքն անոնց այս օգտակար խորհուրդը կու տար. «Աւելի ձեր յեզուին դեմ բարկացե՛ք, կ'ըսէր ժպտելով, փասնդի չի փայելե՛ր կանանց՝ իրենց ամուսիններուն հակառակիլ. հեզահոգի՛ եղիք, զանոնք իրե՛ւ ձեր տեղը անկացե՛ք, և այն ատեն պիտի կարենա՛ք խաղաղութեամբ իրենց հետ ապրիլ:

Ո՛րչափ քաղցր է երկու ամուսիններուն երջանկութիւնը, որոնց միութիւնն ամէն օր փոխադարձ համարմամբ մը, հաւասար սիրով մը, անդրժելի հաւատարմութեամբ մը, կատարեալ միաբանութեամբ և ներդաշնակութեամբ կ'ամրանայ. իրենք ստուգիւ կրնան այնչափ երջանիկ ըլլալ, որչափ հնար է իրենց այդ վիճակին մէջ:

9.

«Բարի՛ Տէր»

Զքեզ քու ստորորադասեալներուդ իրեւ հայրը նկատէ՛, և իրենց քով անոր սեղը բռնէ՛: Երեք բան իրենց պարտական էս, կ'ըսէ իմաստունը. սնունդ, աշխատութիւն, դաստիարակութիւն: Այնպէս մը վարուէ՛, որ քեզմէ՛ կախում ունեցողները, և մանաւանդ քու սպասաւորներդ, միշտ զբաղած ըլլան. անդործութիւնն զիրենք կը ծուլացնէ: Երբ մարդ բան մը չ'ընէր, չարութիւն ընել կը ոտրվի: Ծոյլ և անառակ սպասաւորն հնար է որ լիբը չըլլայ: «Եւ գիտայ խոնարհեցուցանեն, կ'ըսէ Հոգին Սուրբ, գործաւորութիւն հանապազորդ: Արկ զեւ ի գործաւորութիւն, զի մի՛ պարսպեցի: Զի բազում չարութիւն ուսոյց դասարկութիւն» (Եկեղեց. ԼԳ. 27-28): Աւելի եւս հո՛գ տար, որպէս զի քու սպասաւորներդ կրօնքի վերաբերեալ բաներու մէջ դաստիարակուին, և անոր ամէն պարտաւորութիւնները ճշդիւ կատարեն. առանձին եղանակաւ մը այս պարտաւորութիւնը քու վրայդ դրուած է, և Աստուծոյ առջեւ անոր համարը պիտի տաս:

Ձանա՛ լաւ ընտրել քու սպասաւորներդ, որպէս զի պանոնք սաէպ փոխելու չպարտաւորուիս: Դժուարին է լաւ գաղափար մը ունենալ այն տուններուն վրայ, որոնց ծառաներն անգաղար կը փոխուին, և որ այսօր կ'ընդունուին, վաղը ճամբու դրուելու համար: Տեսարան մը կը սարքուի աշխարհի, որ զայն կը զիտէ, և անոր վրայ կը խօսի: Ատով մարդ ինքնիրեն ալ անհաստատութեան և թեթեւամտութեան կերպարանք մը կու տայ: Հանապազորդ փոփոխութիւնները ծառայութիւնը կը նուաստացնեն, զոր ստանձնելէ միշտ մեծապէս պիտի զգուշանան արժանաւոր սպասաւորները: Ձախ միայն չարիւր յանձն պիտի առնուն, և կամ նորեկուններ, զորոնք ուրիշներու համար պիտի վարժեցնեն: Ընդհանրապէս, քաղցրութեամբ, բարութեամբ, և համբերութեամբ կրնանք մարդիկները գրեթէ այնպէս ընել, ինչպէս կը փափաքինք որ ըլլան: Բարի տէր եղի՛ր, աւելի լաւ պիտի ծառայեն քեզի: Խիստ և բարութիւնէ զուրկ տիրոջ մը հանդէպ սպասաւորներն իրենց պարտքը կը կատարեն. բայց զայն կ'ընեն չոր և ցամաք կերպով մը, առանց ջանքի և առանց սիրոյ:

Եւ որովհետեւ ի հարկէ ստիպուած, և որչափ չուտ հնար է, անկէ ելնելու համար կը կենան, կ'ընեն ճշդիւ այնչափ, որչափ պարտաւոր են ընել. և իրենց տէրը միշտ վնաս կ'ընէ, վառնդի կարի հազուադէպ է որ ոնկէ տուիլ և կամ անկէ աւելի լաւ կերպով իրեն ծառայեն:

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱճԷՄԵԱՆ

(Եւրոպայի)

ԱՃԱՅԻՊ ՆԷՃԱԹ

(Տեկամի)

3

Պի՛ն պաշը սօղանը: պաշընտա օթուրմուշ պիրազ ըսընմազատ իքէն իչէրիյէ սուֆրա էօրթի սիւ վէ թաղըմըն կէթիւմէքտէ օլան զայէթ կէնձ քիւչիւք պիր գրզըն կիրափկինի կէօրաիւ: Պունամըշ գասընըն պահս իթմիշ

օլտուղը քիւչիւք Իւրսիւ իտի։ Չէհրէսինին
ըէնկի սօն տէրէճէ սարը, սիմասընըն չըղկը-
լարը նազիք վէ կիւղէլ իտի։ Փագաթ տղիմ
պիր քէտէր վէ էլէմէ տէլալէթ իտիյօրտը։
Պէօյլէ պիր կէնճ հաշտա պու գատար դամ-
ու գատալէթ պին պաշըը չօգ միւթէէսիր
գըլտը։ Անա սատագաթլա պիր դաշ քէլիմէ
սէօյլէտի։ տիլսիզ օլտուղընտան բէք զիտտէ
միւթէէսիր օլտըղընը տա իլալէ էթտի։ զի-
րա պու սէպէպտէն քէնտիսիյլէ միւքեալէմէ
իթմէք զէվզընտան մահրում գալըյօրտը։ Չօ-
ճուգ անա թաթլը ֆագաթ միւլէլիմ պիր
նազարլա պագմըշտը։ Վէ մագամը թէաչիմ-
տէ անա լաթիֆ պիր թարղտա էյիլիպ հագ-
զընտա ըզհար իթտիկի մէհապպէթտէն սօ-
լայը միւթէէքքիւր օլտուգտան սօնրա սիւ-
քիւթ իթմէսինի միւթէզամիւն՝ բարմաղընը
տուտազլարընա սալատը, պատէհու սուֆ-
րայը հազըրլայարագ չէքիլտի։

Սզ միւտտէթ սօնրա Իւրսիւ թէքրար
կէլէրէք չօրպայը կէթիրտի։ պին պաշը ա-
յաղա գալգտը, մատալա հազաշտը։ հիչ ին-
թիզար իթմէտիկինէ կէօրէ, սուֆրա պէգի-
նին դալէթլէ թէմիզ վէ ֆէվզէլատէ կիւղէլ
օլտուղընը միւշահէտէ իթտի։ չօրպայը տա-
լի բէք միւքէմիլէ պուլտը։ Բիւչիւք գըղա
քէնտիսինէ խըտմէթ իթմէսի հագզընտա
մէհալէր էթտի վէ իլալէթէն։ Համո օլտու-
կիւղէլ պիր մէսքէն պուլտում։ Ահ նէ՝ էյի
ուշուլաճաղըմ, վէ պիւթիւն սէյահաթ եօր-
կունըլլարըմտան իսթիրահաթ իտէճէյիմ,
տէտի։ Պին պաշընըն մէմուտնիյէթինտէն ի-
լէրի կէլէն պու սէօլլէրինէ մուգապիլ կէնճ
գըզ զայըը գապիլը թարիֆ պիր նազարլա
անա պագտը, կէօլլէրի հաշլա տօլտու վէ
տէհալ օրտտան չըգարագ զայզ օլտու։ Պին
պաշը քէնտի քէնտինէ՝ Սճալիպ, պու չօ-
ճուք նէտէ՛ն պու գատար մէյուս վէ միւ-
քէտտէր տիր, տիյէ միւլահաղա իտիյօրտը։
Հագիգաթէն հէր շէյի թէմամըլա իշիթմէք
իթթիտարընա մալիք օլմալա պէրապէր հիչ
ճէվապ վէրէմէմէք քիմ պիլիր նէ գատար
մէշագաթլը օլաճագ, մամաֆիյի պու քիւչիւ-
կիւն քէտէր վէ մէյուսիյէթինին էպապը
տահա պաշգա շէյլէր օլաճագ ֆիքըրինտէյիմ։

Հագիգաթէն պու զէվալը քիւչիւյէ թէսիւֆ
իտէրիմ։ պու սէվիմի չօճուղըն եէէսինին
հագիպի էպապընը անլամաք վէ անա չարէ-
սապ օլմագ իշիւն չօգ շէյ վէրիտիմ»։ Պիր
միւտտէթ սօնրա Իւրսիւ շիշտէ գըղարմըշ
դարաճա իլէ սալաթա կէթիրմիշտի։ Պու
թապաղարը մասա իւզէրինէ վագ իթտիկի
սըրատա պինպաշընըն թապաղը հանրա
կիլլիճէ պիր քեաղըտ բարչաղը վագ իթ-
միշ վէ կէօլլէրինի կեան քեաղըտա կեան
մաթպահնը բէնչիքէսինէ տօղրու թէվճի
սուրէթիլլէ իշարէթ իտէրէք սիւրաթլա
օրատտն թէպալա իթմիշտի։ Պին պաշը
էթրաֆընա աթֆը նազար իթտիքտէ քիւ-
չիւք գըզ թարաֆընտան իշար օլունան բէն-
չէրէնին, օթուրտուպարը օտա իթթիսալին-
տէ պուլունան մաթպալա միւնասիպէթտէ
օլտուղընու միւշահէտէ իթմէքլէ պէրապէր
իշիլիար գատընըն տալի օրատա կիլլէնմիշ
վէ կէօզ պուլագ օլարագ օտա տալիլինտէ
միւրուր իտէն հալաթը թէճէսիւս իթմէքտէ
օլտուղընու անլատը։ Պին պաշը քիւչիւք
տիլսիզ գըզըն իշարաթը իւզէրինէ օքեա-
ղտը կիլլիճէ գրաթ իթմէք իճապ էյլէ-
տիկինի անլամըշտը։ պինպէն ալէյի անը
մասա իւզէրինտէն գալարմագըզըն թապա-
ղընա տօղրու թագրիպ իտէրէք գուրշու-
գալէմիլ վի թիթրէք պիր էլ թարաֆընտան
հագըլմըշ օլան շու քէլիմէլէրի օգուտու։

«Սիզ հայտուտար եաթաղընա տիւլտիւ-
«նիւզ, Հաթթա պու կէճէ սիզի գաթլ իտէ-
«ճէքլէր։ Սօն տէրէճէ տիգգաթ իտուպ սա-
«գընընը։ Ճէնապը Հագգ սիզէ մուալէնէթ
«իհասան վէ սիզի... վէ այնը զէմանտա պէ-
«նի տէ պէրապէրինիզտէ թալիս էյլիյէ։»

Պին պաշը տէհէթ վէ հալլէթտէ գալմըշ-
տը։ ֆիրար իթմէ՛ք մի, հօգսա հալը թէ-
տաֆիտէ պուլընմա՛դ մը իճապ իտէճէկինի
քէնտի քէնտինէ թէֆէքքիւր իթմէքլէ պէ-
րապէր, գազանըն հագըզի օլտուղընտան տա
հէնուզ շիւպէ վէ թէրէտտիւտ իտիյօրտը։

Օ էանատէ տատըզ խըղմէթճիսի Հասըա
էֆէնտիսինին կի՛յ ի իրար իթմէք իշին մէսը
իշթիյաճ իտէպիլէճէկի էշեալը համիլ օլան
չանթասըլա պէրապէր գաթութընը կէթիրէ-

ընթացիկ կերպով Պոլսումը զատու թա-
րափնտան անլաշըմամազ իշին պին պաշը՝
խըսմէթճիսինէ մաճարճա լիսանըյա խփա-
տէի մէրամ էթտի. քէնտիլէրինի թէհտիս
իտէն շու դազատան գուրթուլմանըն էն միւ-
քէմմէլ վէսայիթինի պէրապէրճէ միւզաքէրէ
իթմէք իշին բուսուլանըն մուհթէվիթլընը
անա իզահ էթտի. խըսմէթճիսի իպթիսա
տիւշարը տէհշէթ օլտու:

— Պին պաշը՝ Ա, ճէսարէթիմիզի դայպ
իթմէյէլէմ. հէր նէ գատար պու մէսէլէ ազ
կիւլիւնս իսէ տէ, կիւլէիէք թէաթիլը էֆ-
քիար իտէլիմ, զիրա էկէր պիզի թէրէսսիւտ
ալթընտա պուլընտըրան շու մէլուն պունա-
մը ճիտտի վէ գօրպունճ թալըրըդը կէօ-
րիւսէ, շիւպիէլէր հասըլ իտէպիլիթ, տէտի:

Պունուն իւզէրինէ կէօյա էֆէհտիսի դա-
յէթ կիւլտիւրիւճիւ պիր շէյ տէմիշ կիպի
Հասքա տէրհալ պահպահա իլէ կիւլմէյէ պաշ-
լտը:

— Էֆէհտիսի՝ Բէք ալա, ֆազաթ սէնին
պու տէրէճէ բաթըրտըլը գահգահանըն տա
բէք օ գատար լիւզումի եօզ տըր, տիլէ տէ-
վամ իթտի. Էվվէլա սէն կի'թ վէ պէնիմ է-
յէրիմտէքի թապանճալարըմ կէթի'ր. հէր
հալտէ օնլար պանա պիրինճի թէարրիւզիւ
կէրի իթմէյէ իտտիմ օլտըլար. պաստհու-
զանն իտէրիմ քի շու համիլ օլտուղըմ պըլը-
ճըմ տախի քիսֆի տէրէճէտէ խըսմէթ իտէ-
պիլէճէք տիր. Փապաթ սէն շու էվին հէր
քէօշէ վէ պուճաղընը զիյարէթ իթմէյէ դայ-
րէթ է'թ. արաշտը'ր պազալըմ, շիւպիլի պիր
շէյ պուլաճա'պ մըսըն: Կէրէք էպիհա օլտուն
կէրէք չալընմը չէհա, կիզլի քիմէլէրին
պուլունուպ պուլունմատըղընը վէ պիզիմ
ֆիրար իթմէմիզին էլզէմ օլուպ օլմատըղընը
հէր թէտպիզ էթ, Շիմտիլիք պէնպու գատը-
նը ալը պօյարապ սէնի թէտպիլ վէ թէրէ-
սիւտ էթմէսինէ մանի օլաճաղըմ. մաթպա-
խը թէրք իտէճէկի էմնատա պուրայա չաղը-
րարաք օնը մի թէմատիէն կէվէզէլէթտի-
րիւրիմ:

Հասքա կիթտի. պիր շէրէք սաթի ոճն-
րա պին պաշընըն թապանճալըն պէրապէր
կէլէրէք անլէրի մառանըն իւզէրինէ վազ

էթտի. քէնտիսի տէհշէթլէր իշինտէ օլտու-
ղու հալտէ շու սէօզլէրի սէօյէտի. Չօք շէյ
կէօրտիւմ. ախըրըն հիհայէթինտէ սէիսէ
մախսուս օլմասը մուհթէմէլ պիր օտաճըք
տախիլինտէ պիր եաթաք միւշահէտէ էթ-
տիմ. պու մահալի քէմալը տըգգաթլա թէտ-
գիզ իթտիկիմտէ եէրտէն պիր մահզէն գաբա-
ղը քէշֆ իթտիմ. վէ օնը աշարաք աշաղը
էնտիմ. նէլէր կէօրտիւմ Եա'րապպի. էն խա-
շուխատան, գատիֆէ վէ իբէկին էնվալը ա-
տիտէսինտէն պիր եղըն էլպիսէ նազարը
տըգգաթլըմը ճէլպ էթտի. Պունլարըն էքսէ-
րիսի գանլա լէքէլէնմիշտի. Պունլար մէյա-
նընտա աթլաա պիր եէլէք, քի շիւպիէսիզ
միւմթաղ պիր քիմէլէն օլմուշ օլաճաք,
թամ գալպի մահալընտան պիր գամա տար-
պէսիլէ տէլինմիշ վէ պիւթիւն եէլէք գան
իշինտէ գալմը իտի. տէհշէթիմ օ գատար
ֆէվպէլտտէ օլտու քի թիւլէրիմի էօրբիւթ-
տիւ. ճանի վէ հայտուալար եաթաղընա
տիւշտիւլիւմիւզէ արթըք շիւպիէ վէ թէրէտ-
տիւտ եօզ. Պունունլա պէրապէր ֆիրար
էթմէյին տախի չարէսի հիշ եօզ. Պէօյիւք
գաբու մուպալիմ վէ ճէսիմ քիլիսիւլէրլէ գու-
վէթլիճէ մէստուտ օլտուղու կիպի անախ-
թալարը տախի մէլուն պունամըն թարա-
ֆընտան քէմալը տըգգաթլա հըֆզ իտլիմիշ
օլաճաք. էթրաֆը իհաթէ իտէն տիվար չօք
եիւքսէք օլտուղունտան օնը մէրտիվէնսիզ
աշմաք դայըր գապիլ տըր. պունտան մա-
տա պէյկիլէրիմիզի պունլարաճ մը թէրք ի-
տէճէյիզ. Մամաֆիհ գանն էտէրիմ քի հայ-
տուալարտան հիշ պիրի պու էմնատա խանէ
տախիլինտէ կիզլի պուլունմայօր: — Պին պա-
շը. Ատէալէրի պիր տուզինա օլաա պիլէ օն-
լարտան հիշ գօրպամ տէտի. եալընըզ գանն
իտէրիմ քի ֆըրսաթտան իսթիֆատէ էթմէք
էն էսլէմ թարիզ օլաճապ. Պունամըն իա-
թիար էվաէ եալընըզ պաշընա պուլունու-
յօր. հէր հանլը պիր վասիթա իլէ էլլէրին-
տէն անտիւթարը ալմաղա անը մէճպուր իտէ-
լիմ վէ պէյկիլէ պինէրէք էմին վէ նամուս-
լու պիր բիւճաաթ իճրա էտէլիմ. պէն գան
տէօքիւմէսինի արղու էթմէմ.

(Մապասի վար)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՍԻՐՏ ԱՐԸ

(Շար. եւ վերջ)

Գ.— Յաջորդ օրը արձակուրդի օր մըն էր։ Պրաքի առտուն կանուխ կ'ելլէ եւ գնորդ մը կը փնտռէ իր բնապատմական թանգարանին, որուն մեծ արժէք կու տար։ Վերջապէս գնող մը կը գտնէ, սակարկութիւնը կ'ընէ, առանց ինծի իմաց տալու եւ 600 սկուդի կը ծախէ։

Պրաքի դրամը առնելուն պէս կը վազէ կ'երթայ այն մեծաւոր տունը։ Մեղմով կը կանչէ պառաւը, որ զարմանքով կը հարցնէ իր գալտեսան պատճառը։

— Զեզ ազատելու կու գամ, կը պատասխանէ աշխոյժով, եւ ահա ասով պիտի կարենաւ փեսագործի։

Այս խօսքերն ըսելուն պէս, շնորհակալութեան արտայայտութիւններէ ազատելու համար 600 սկուդը պարունակող քսակը կահի մը վրայ կը դնէ ու խոյս կու տայ՝ որպէս թէ վատթար գործ մը ըրած ըլլար։

Բարի պառաւը այնքան յանկարծակիի եկած էր որ չէր կրցած բառ մը արտասանել։ Այն ատեն որտի՛ն յորդ ուրախութենէն՝ իր աղջկը կը կանչէ եւ երանելի քսակը անոր կ'երկարէ։ Բայց մանկամարդ կիներ ոչ միայն չի մասնակցիր իր մօրը ուրախութեան, այլ եւ կը խռովի կը շփոթի ու քսակը գետին կը ձգէ։ Ո՛րչափ որ նախընթաց օրը ինձմէ առած քիչ մը դրամը զինքը ուրախութեամբ եւ երախտաբանութեամբ լեցուցած էր, նոյնչափ իրեն կտակած առթեր էր պատանիի մը կողմէ ընծա՝ յուսած այս կարեւոր գումարը։

— Զրուշանա՛նք, կ'աղաղակէ, զգուշանա՛նք, մե՛յրիկ, այս դրամին դաշէլէ, այն տղան թերեւս մեր թշուառութեան պատմութենէն յուզուած, այս տրամադրութիւնը բրած է առանց իր ծնողքին հաւանութեան, այս քսակը ընդունիլը մեզի համար անհերքելի զեղծում մը պիտի ըլլայ։

— Պահե՛նք զայն, որպէս զի եթէ ետ իընդրուի՝ կարենանք տալ։

Երկու օր վերջը ընդունեցանք այն գումարը զոր մեր ծնողքը սովոր էին մեզի զրկել ամէն ա՛միս, մեր մանր մուկը զուարճութիւններուն համար։

Որովհետեւ ամենէն քաղցր զուարճութիւնն է չքաւորներու օգնել, հիւզիւն ինզձ կիները կը յիշեմ նորէն, եւ առած դրամիս մէկ փոքր մասը անոնց կը տանիմ կարող չէի (կը խոստովանիմ) իմ աղջիկ բարեկամիս պէս, այն թշուառներուն համար զոհելու մեր հասակին բոլոր զուարճութիւնները, քիչ մը բան իսկ տալը, ըստ իմ գաղաղու-

թեանս, բաւական բարի գործ մըն էր։ Ա՛հ, ո՛րքան վար կը զգամ ինքզինքս իմ սիրելի մրցակցէս, երբ հիւզը հասնելով կը տեսնեմ թէ կիներն ու տղաքը դիմացս կը վազեն եւ առանց ժամանակ տալու որ իմ չնչին պարգեւս իրենց ընծայեմ, ինծի կը հարցնեն թէ ի՛նչ է այն պատանիին անունը որ հետս հիւզը եկած էր։

— Անիկայ իմ ամենէն մտերիմ բարեկամս է, կ'ըսեմ։

— Շատ լաւ, կը պատասխանէ մանկամարդ մարդ, հին դարանէ մը Պրաքիի քսակը հանելով, տա՛ր այս դրամը տո՛ւր իրեն կամ իր ծնողքին, կ'աղաչեմ։ Զենք կրնար զեղծանիլ այն վեհանձն որտի՛ն բարութեամբը՝ մեզի սեփականելով այսքան կարեւոր գումար մը, որ անշուշտ ուրիշ բոլորովին տարբեր նպատակի մը յատկացուած է։

Զարմացումս եւ հիացումս իրենց վերջին աստիճանին կը հասնին։

Կը յիշեմ այն ատեն Պրաքիի անտուկներ շարկած մարդու մը հետ ստէպ երթալն ու գալը՝ որուն պատճառը հարցնելու հետաքրքրութիւնը ունեցած չէի։ Երբեք չէի կրնար մտքէ անցնել թէ Պրաքի, որուն միակ հաճոյքն էր իր հաւաքածոն, պիտի կրնար դայն ծախել՝ անծանօթին մէկը բանտէ ազատելու համար, բայց իրողութիւնը մէջ տեղն էր, չէի կրնար տարակուսիլ։

— Անհանգիստ մի՛ ըլլաք, ըսի այն բարի անձերուն, այս դրամը իմ բարեկամիս է եւ բոլորովին իր տրամադրութեան տակ է։ Ոչ ոք իրաւունք ունի այս մասին իրեն բան մը ըսելու, որովհետեւ իր աշխատութեան եւ ինայողութեան արդիւնքն է ասիկա։

— Ա՛հ, եթէ ճշմարիտ է ըսածդ, պա՛րոն, շատ երջանիկ պիտի ըլլամ, եւ պիտի եպարիմ ինքզինքս խտիւ, որ ամուսինս երկու օր աւելի բանտը թողուցի։ Բայց ստուգիւ ո՞վ կրնար այսպիսի բանի մը հաւատք ընծայել։

— Եթէ երբեք ըսածիս վրայ ո՛րեւէ տարակոյս ունիք, եկէ՛ք միասին երթանք Սէպէնի դպրոցը, հոն պիտի տեսնէք թէ Յովհաննէս Պրաքի ի՛նչ կերպով հայթայթիր է այս ստակը։

— Տէ՛ր Աստուած, այդ ընելու պէտք չկայ, սիրելի՛ պարոն, քանի որ դուք այդպէս կ'ըսէք, հիմայ կը վազեմ կ'երթամ նոյնը դարձածելու մեր աղջիկ, երիտասարդ բարեբարին դիտաւորութեան համեմատ։ Ո՛րչափ պիտի ուրախանայ ամուսինս եւ պիտի օրհնէ զանիկայ երբ անոր շնորհիւ կարենայ նորէն իր ընտանիքը տեսնել եւ իր գործերուն պարագիւր...։

Կ'առաջարկեմ մանկամարդ կնոջ՝ ընկերանալ իրեն մինչեւ բանտը, ինչ որ ուրախութեամբ կ'ընդունի։

Հոն կը գտնենք ամուսինը, որ պատուաբեր սպինքերով ծածկուած հին զինուոր մըն է։

Անիրաւութեամբ իր ընկերներէն մէկուն, ուրուն երաշխաւոր եղած էր, ինկած էր անդունդը այս թշուառութեանց, որոնց ամենամեծ համակամութեամբ տարած էր:

Երբ առանց կասկածի կը տեղեկանայ թէ Աստուծոյ մէկ հրեշտակը կու տայ իրեն՝ ազատօրէն իր ընտանեաց քով դառնալու երջանկութիւնը, չի կրնար դիմանալ այս ուրախութեան, ինչպէս տուկացիներ էր նեղութեան, կը գունատի եւ կը դողդաղայ:

Կնոջ օգնութեամբը քիչ վերջը դարձեալ ինքն իրեն կու գայ, կը զգայ իր երջանկութիւնը, եւ ձեռքս սեղմելով կը յայտնէ իր շնորհակալութիւնը թէ՛ ինծի եւ թէ՛ Պրասքիի նկատմամբ:

— Ա՛հ, Նախախնամութիւնն ինքնին ուղղեց ձեր քայլերը դէպի մեր հիւղակը: Աւա՛ղ, առանց ձեզի ի՞նչ պիտի ըլլային այս երկու խեղճ կիները եւ իմ սիրելի փոքրիկներս: Բիւրեցս օրհնեալ ըլլա՞ք ուրեմն ձեր բարի գործքին համար:

Դ. — Դպրոցը կ'երթամ եւ բարեկամս տեսնելու պէս կ'ըսեմ:

— Պրասքի, քու բնապատմական թանգարանիդ սիրահարները դտած եմ:

— Կարգադրուած չէ, կը թաթովէ շիկներով, եւ այս պահուստ անկարելի է որ ցոյց տամ գայն:

— Կը հաւատամ. բոլոր սակայն պոնէ յանձն պիտի առնուք անոր տեղը ցոյց տալ հիւղին բնակիչներուն:

— Մատնուած եմ, կը գոչէ բարեւէր ուսուցչո՞ղը:

Այն ատեն իրեն կը պատմեմ թէ ի՞նչպէս իմ չնչին ոգորմութիւնս ինծի առիթ տուած էր տեղեկանալու իր գեղեցիկ գործին, զոր ինքը մեծ յանձն քանք մը պարտկելու պէս խնամով ծածկած էր:

Ողորմածութիւնը՝ այն մաքուր սիրոյ դուռն տըր եւս ունի՝ իր պատկառանքն ու խորհուրդները, մտածեցի: Եւ այս սփոփիչ խորհրդածութիւնը

խորասուզեց զիս հեշտալի երազանքի մը մէջ:

Հաճոյ թուեցաւ ինծի, ինչպէս նաեւ հիւղին բարի մարդիկներուն, հրապարակել այս գեղեցիկ միջադէպը, որ հետեւելի ընտիր օրինակներով է:

Պրասքեանց բարեկամները բազմութեամբ եւ կան շնորհաւորելու դանոնք այսպիսի բարեձիր զաւկի մը կեանք տուած ըլլալուն համար, եւ ճամբան իրարու կ'ըսէին, — ինչպէս հրեաները Յովհաննէս Կարապետի մասին, որուն անուանաւ կից էր:

— Ի՞նչ պիտի ըլլայ օր մը այս մայնուկը...

Ռ. ՏԸ ՊԵՂԵՒ 081

Թարգմանեց ԱՐՁԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Դեկտեմբեր 9ին, Ս. Աստուածածնի ՉԱնարատ Յղութեան տօնին օրը, Ա. Յ. Կարգին Մայր Վանատան մատարան մէջ պատարագեց Ամենապատիւ Հոգեւոր Տէրը: Ի ներկայութեան Ն. Գերբրջանկութեան՝ տեղի ունեցաւ նոյն օրը Բոյր Թագուհի Կէօտէլէկեանի ուխտադրութեան արարողութիւնը: Պատարագէն յետոյ Ամենապատիւ Տէրը ընկերակցութեամբ Արհի. Նաղլեան Գերապայծառին ընդունելութեան սրահը ելաւ եւ իր շնորհաւորութիւնները ուղղեց Ա. Ա. Բոյրերուն: Արհի. Յ. Արքեպ. Ռոքոսեան Կ. Պ. Փոխանորդը եւ Արհի. Սիսեան Գերապայծառը եւս նոյն օրը Մայր Վանատունը երթալով Ա. Յղութեան տօնը շնորհաւորեցին:

* * * Գեղտ. 2ին, Հռոմի Անիմա աւատրիական եկեղեցւոյն մէջ, Ֆրանց Եղեմի կայսեր դահակալութեան 66երորդ տարեդարձին առթիւ, գահաբանական աղօթք տեղի ունեցաւ, ի ներկայութեան 11 կարգինալներու եւ բազմաթիւ եկեղեցական եւ աշխարհական անձնաւորութեանց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Քանանայապետին Ա. Շրջաբերական կոնդակը.	729
Հին վաւերաբուրքեր	789
Եօթնեակ Բիւստնէի	790
Հին վաւերաբուրք մը	791
Աստուծոյ արքայութիւնը	793
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	795
Անայիպ Եկեմ	796
Այլեւայլ	799

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՅՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

ԲՄԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — Թուրքիոյ համար տա-
րիկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսաւահ-
ման՝ տար. ֆր. 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ. — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5¹ Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խակական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի չորս և ի վիճակի է՝ որ և իցէ տպագրական գործաց համար: Կը տպուին տմեն տե-
սակ ծանուցմունք, զրբքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդէր, քարդ-ատրէսներ,
մահադիւններ, եւն. եւն.: Գիները անքիցիկ կերպով աժան են: Բեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat de vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.